ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ԳՀԾՁԲ-2/1-1

ք. Երևան

12.01.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Ձ-ն, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 7 300 000 (յոթ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ծեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչությունը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011127066
ՀՎՀՀ 00804008
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի
ք. Երևան, Սեբաստիա 23բն.14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050932189441001
ՀՎՀՀ 32530056

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-2/1-1 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժնի համար | Աշխատանքի անվանում | Տեխնիկական բնութագիր | Առավելագույն գին/դրամ/ | Գնման ժամանակացույց |
|---|---|---|---|---|
| 1 | Ջրային նորոգման ծառայություններ (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-S-127-ի նորոգում) | Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում: | 4000000 | *Ծառայությունների համար գնման ժամանակացույց կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:* |
| 2 | Ջրային նորոգման ծառայություններ (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում) | Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում: | 1500000 | |
| 3 | Ջրային նորոգման ծառայություններ (Լիցքավորման սարքի նորոգում) | Լիցքավորման սարքի փաստացի անսարքությունների վերացում, անսարք դետալների փոխարինում և վերանորոգում: | 500000 | |
| 4 | Ջրային նորոգման ծառայություններ (Տրանսֆորմատորի նորոգում) | 2.5-10կվտ հզորության չոր տիպի եռաֆազ և միաֆազ տրանսֆորմատոր-ների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք հանգույցների փոխարինում: | 500000 | |
| 5 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68) | Մալուխների միացման համար նախատեսված մեկուսիչի փոխարինում: | 200000 | |
| 6 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաժանարար տուփի նորոգում) (ԿՇԿ) | Մեկուսիչի վրա հավաքված բաժանարարների, երկկողմանի հաղորդիչների փոխարինում: | 200000 | |
| 7 | Ջրային նորոգման ծառայություններ (Էլեկտրական հանգույցի նորոգում) | Էլ. հանգույցի փոխարինում: | 400000 | |

**Ծանոթություն:**

Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից: Նորոգումը իրականացվում է ՀՀ ԶՈՒ ՄՊՎ հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն, կազմակերպության արտադրամասում:

## Ծառայությունների միավորի գներ

*1.Զորային նորոգման ծառայություններ (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-S-127-ի նորոգում)*

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի Գինը |
|---|---|---|---|
| 1. | PA250 շարժիչի փոխարինում | հատ | 40000 |
| 2. | PA250 շարժիչի նորոգում | հատ | 6000 |
| 3. | PA250 շարժիչի կցաշուրթի փոխարինում | հատ | 3000 |
| 4. | УЛ062 շարժիչի փոխարինում | հատ | 28000 |
| 5. | УЛ062 շարժիչի նորոգում | հատ | 4000 |
| 6. | УЛ062 շարժիչի կցաշուրթի փոխարինում | հատ | 3500 |
| 7. | CBB 60 կոնդենսատորի փոխարինում | հատ | 2700 |
| 8. | Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում | հատ | 1800 |
| 9. | Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում | հատ | 1800 |
| 10. | Փոխանցման տուփի մեկ հեղույսի փոխարինում | հատ | 600 |
| 11. | Ապահովիչի բնիկի փոխարինում | հատ | 1800 |
| 12. | Ապահովիչի փոխարինում | հատ | 300 |
| 13. | Սնուցման հանգույցի փոխարիինում | հատ | 2700 |
| 14. | Հետադարձ ինֆորմացիայի և գիշերային նմանակման հանգույցի փոխարինում | հատ | 2500 |
| 15. | Խոցման շղթայի հանգույցի փոխարինում | հատ | 2500 |
| 16. | Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումբլեռ) փոխարինում | հատ | 2800 |
| 17. | Խոցման շղթայի անջատիչի (տումբլեռ) փոխարինում | հատ | 2000 |
| 18. | Իրանի մեխանիկական վնասվածքի վերանորոգում | հատ | 2000 |
| 19. | Էլեկտրաեռակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով | սմ | 500 |
| 20. | Էլեկտրաեռակցման աշխատանքներ խողովակների համար1սմ կարի հաշվարկով | սմ | 700 |
| 21. | Իրանի ներկում | հատ | 3 000 |
| 22. | Ամբարձիչի կափարիչի փոխարինում | հատ | 5000 |
| 23. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թևիկի փոխարինում | հատ | 3000 |
| 24. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի փոխարինում | հատ | 1000 |
| 25. | Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում | հատ | 1500 |
| 26. | Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում | հատ | 500 |
| 27. | Շուտվիկաշարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում | հատ | 5000 |
| 28. | Շուտվիկաշարժաթևային մեխանիզմի կիսալուսնի փոխարինում | հատ | 3000 |
| 29. | Շուտվիկաշարժաթևային մեխանիզմի ականոցի փոխարինում | հատ | 1500 |
| 30. | Էլեկտրական բլոկի փոխարինում | հատ | 18000 |
| 31. | Ղեկավարման բլոկի փոխարինում | հատ | 20000 |
| 32. | Դ816 դիոդի փոխարինում | հատ | 1 800 |
| 33. | ՌԷՍ-22 ռելեի փոխարինում | հատ | 3000 |
| 34. | Ռելե 24վ փոխարինում | հատ | 2800 |
| 35. | ԿԴ209 դիոդի փոխարինում | հատ | 2 000 |
| 36. | 1000մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1300 |
| 37. | 470մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 500 |
| 38. | 220մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1 000 |
| 39. | 47մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1 000 |
| 40. | 0,22մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 800 |
| 41. | 2,2մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1 000 |
| 42. | ԿՌԻ202Ն տիրիստորի փոխարինում | հատ | 2500 |
| 43. | 1N 4007 դիոդի փոխարինում | հատ | 1000 |

| | | | |
|---|---|---|---|
| 44. | VT 151 տիրիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 45. | Մեկ հաղորդալարի փոխարինում | հատ | 500 |
| 46. | Տպագիր պլատայի ուղղում | հատ | 500 |
| 47. | Միկրոանջատիչի փոխարինում | հատ | 3000 |
| 48. | Միկրոանջատիչի կալունակի փոխարինում | հատ | 500 |
| 49. | Կցորդիչի (խաչուկ) փոխարինում | հատ | 5000 |
| 50. | BT 138 սիմիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 51. | TC 106 սիմիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 52. | ՓԻՔ 16Ֆ622 պրոցեսորի փոխարինում | հատ | 4000 |
| 53. | 7805 ստաբիլիզատորի փոխարինում | հատ | 2000 |
| 54. | Ամբարձիչի թևիկի փոխարինում | հատ | 1500 |
| 55. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի երկար զսպանակի փոխարինում | հատ | 4000 |
| 56. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի կարճ զսպանակի փոխարինում | հատ | 1500 |
| 57. | РП-14-30 հանգույցի փոխարինում | հատ | 2000 |
| | **Ընդամենը՝ 219900** | | |

*2.Զորային նորոգման ծառայություններ (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)*

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Մեկնարկիչի ( ТУМБЛЕР ПУСК) փոխարինում | հատ | 2000 |
| 2. | Սեղմակի փոխարինում | հատ | 2000 |
| 3. | Ալեհավաքի փոխարինում | հատ | 4000 |
| 4. | Ալեհավաքի բնիկի փոխարինում | հատ | 1000 |
| 5. | Սնուցման հանգույցի փոխարինում | հատ | 1800 |
| 6. | Մեկ մարտկոցի փոխարինում | հատ | 4000 |
| 7. | Մեկ ռադիոմալուխի փոխարինում | հատ | 600 |
| 8. | Ռադիոմալուխի մեկ միացման հանգույցի փոխարինում | հատ | 1000 |
| 9. | Խմբային փոխանցիչի փոխարինում | հատ | 1500 |
| 10. | Ռելե 12 վոլտ փոխարինում | հատ | 2000 |
| 11. | Մեկ հաղորդալարի փոխարինում | հատ | 500 |
| 12. | Կոնդենսատորի փոխարինում | հատ | 700 |
| 13. | Ինդուկցիոն կոնտուրի փոխարինում | հատ | 2000 |
| 14. | Ռեզիստորի փոխարինում | հատ | 700 |
| 15. | Փոփոխական ռեզիստորի փոխարինում | հատ | 1000 |
| 16. | ԿՏ 368 տրանզիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 17. | ԿՏ 315 տրանզիստորի փոխարինում | հատ | 1500 |
| 18. | Ինդուկտիվ կոճի փոխարինում | հատ | 800 |
| 19. | Վարիկապի փոխարինում | հատ | 1000 |
| 20. | ԿՏ 646տրանզիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 21. | ԿՏ 920Ա տրանզիստորի փոխարինում | հատ | 6000 |
| 22. | ԿՏ 920Բ տրանզիստորի փոխարինում | հատ | 6000 |
| 23. | ԿՏ 972Ա տրանզիստորի փոխարինում | հատ | 2500 |
| 24. | ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի փոխարինում | հատ | 3000 |
| 25. | 4 ՄՀց ռեզոնատորի փոխարինում | հատ | 1500 |
| 26. | ԿՑ 162 Ա ստաբիլիտրոնի փոխարինում | հատ | 1000 |
| 27. | 7805 ստաբիլիզատորի փոխարինում | հատ | 2000 |
| 28. | 1015ՊԼ4 սինտեզատորի փոխարինում | հատ | 1500 |
| 29. | Լուսադիոդի փոխարինում | հատ | 200 |
| 30. | Տպագիր պլատայի ուղղում | հատ | 500 |
| 31. | Ռադիոհրահանգների ձևավորման բլոկի փոխարինում | հատ | 10000 |
| 32. | Ռադիոհաղորդիչ բլոկի փոխարինում | հատ | 7600 |
| 33. | Իրանի ներկում | հատ | 1000 |

**Ընդամենը՝ 74900**

*3. Ջրային նորոգման ծառայություններ (Լիցքավորման սարքի նորոգում)*

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Սնուցման բլոկի փոխարինում | հատ | 5000 |
| 2. | Կառավարման բլոկի փոխարինում | հատ | 7000 |
| 3. | Սնուցման հանգույցի փոխարինում | հատ | 2000 |
| 4. | Ապահովիչի բնիկի փոխարինում | հատ | 1500 |
| 5. | Ապահովիչի փոխարինում | հատ | 500 |
| 6. | Տումբլերի փոխարինում | հատ | 2000 |
| 7. | Լուսադիոդի փոխարինում | հատ | 500 |
| 8. | Տպագիր պլատայի ուղղում | հատ | 500 |
| 9. | Իրանի փոխարինում | հատ | 5900 |
| **Ընդամենը՝ 24900** | | | |

*4. Ջրային նորոգման ծառայություններ (Տրանսֆորմատորի նորոգում)*

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | ՏՍՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 51900 |
| 2. | ՏՍՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 50000 |
| 3. | ՏՍՋ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 28000 |
| 4. | ՏՍՋ 380/220,4 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 26000 |
| 5. | ՏՍՋ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 12000 |
| 6. | ՏՍՋ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 18000 |
| 7. | Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 28000 |
| 8. | Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 23000 |
| 9. | Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 18000 |
| 10. | Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 13000 |
| 11. | ՏՍՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 117000 |
| 12. | ՏՍՋ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 58000 |
| 13. | ՏՍՋ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 40000 |
| 14. | Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 40000 |
| 15. | Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 36000 |
| **Ընդամենը՝ 558900** | | | |

*5. Ջրային նորոգման ծառայություններ (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68)*

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Բաշխման տուփի փոխարինում | հատ | 1900 |
| 2. | Բաշխման տուփի կափարիչի փոխարինում | հատ | 1000 |
| 3. | Բաշխման տուփի մեկուսիչի փոխարինում | հատ | 1000 |
| **Ընդամենը՝ 3900** | | | |

*6. Ջրային նորոգման ծառայություններ (Բաժանարար տուփի նորոգում) (ԿՇԿ)*

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Բաժանարար տուփի փոխարինում | հատ | 1800 |
| | **Ընդամենը՝ 1800** | | |

*7. Ջրային նորոգման ծառայություններ (Էլեկտրական հանգույցի նորոգում)*

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Անուցման հանգույցների փոխարինում | հատ | 2700 |
| 2. | Հետադարձ ինֆորմացիայի և գիշերային նմանակման հանգույցների փոխարինում | հատ | 2500 |
| | **Ընդամենը՝ 5200** | | |

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-2/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Ծառայության անվանումը | CPV կոդ | Ընդհանուր առավելագույն գին /դրամ/ | Վճարումը՝ |
|---|---|---|---|---|
| 1 | Ջրային նորոգման ծառայություններ (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-S-127-ի նորոգում) | 50841200/324 | 4 000 000 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում |
| 2 | Ջրային նորոգման ծառայություններ (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում) | 50841200/326 | 1 500 000 | |
| 3 | Ջրային նորոգման ծառայություններ (Լիցքավորման սարքի նորոգում) | 50841200/329 | 500 000 | |
| 4 | Ջրային նորոգման ծառայություններ (Տրանսֆորմատորի նորոգում) | 50841200/330 | 500 000 | |
| 5 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68) | 50841200/331 | 200 000 | |
| 6 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաժանարար տուփի նորոգում) (ԿՇԿ) | 50841200/332 | 200 000 | |
| 7 | Ջրային նորոգման ծառայություններ (Էլեկտրական հանգույցի նորոգում) | 50841200/333 | 400 000 | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արմենչեյ Բաղդասարյան Տիգրանի

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-2/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ __________________________

______________________________

հվհհ __________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ___________________________

______________________________

հվհհ___________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «                    » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 3.
N ԳՀԾՁԲ-2/1-1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը / Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԾՁԲ-2/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 14 .03. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Ձ-ն, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 12.01.2018թ. կնքված № ԳՀԾՁԲ-2/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ծնով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայության արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի մատուցելիք Ծառայության առավելագույն գինը կազմում է 7 300 000 (յոթ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 7 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Սեբաստիա 23բն.14 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2050932189441001 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 32530056 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ |

«ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» "ARTASHES BAGHDASARYAN" 32530056

*Հավելված N 1*
*N ԳՀԾՁԲ-2/1-1 պայմանագրին կից*
*N 1 Համաձայնագրի*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժնի համար | Աշխատանքի անվանում | Առավելագույն գին/դրամ/ | Գնման ժամանակացույց |
|---|---|---|---|
| 1 | Ջրային նորոգման ծառայություններ (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-S-127-ի նորոգում) | 4000000 | Ծառայությունների մատուցումը 2018թ-ի 1-ին, 2-րդ , 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում ըստ ՀՀ ԶՈՒ ՄՊՎ հայտերի, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ. |
| 2 | Ջրային նորոգման ծառայություններ (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում) | 1500000 | |
| 3 | Ջրային նորոգման ծառայություններ (Լիցքավորման սարքի նորոգում) | 500000 | |
| 4 | Ջրային նորոգման ծառայություններ (Տրանսֆորմատորի նորոգում) | 500000 | |
| 5 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68) | 200000 | |
| 6 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաժանարար տուփի նորոգում) (ԿՇԿ) | 200000 | |
| 7 | Ջրային նորոգման ծառայություններ (Էլեկտրական հանգույցի նորոգում) | 400000 | |

**Ծառայությունների միավորի գներ**

1.Ջրային նորոգման ծառայություններ (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-S-127-ի նորոգում)

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի Գինը |
|---|---|---|---|
| 1. | PA250 շարժիչի փոխարինում | հատ | 40000 |
| 2. | PA250 շարժիչի նորոգում | հատ | 6000 |
| 3. | PA250 շարժիչի կցաշուրթի փոխարինում | հատ | 3000 |
| 4. | УЛ062 շարժիչի փոխարինում | հատ | 28000 |
| 5. | УЛ062 շարժիչի նորոգում | հատ | 4000 |
| 6. | УЛ062 շարժիչի կցաշուրթի փոխարինում | հատ | 3500 |
| 7. | CBB 60 կոնդենսատորի փոխարինում | հատ | 2700 |
| 8. | Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում | հատ | 1800 |
| 9. | Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում | հատ | 1800 |
| 10. | Փոխանցման տուփի մեկ հեղույսի փոխարինում | հատ | 600 |
| 11. | Ապահովիչի բնիկի փոխարինում | հատ | 1800 |
| 12. | Ապահովիչի փոխարինում | հատ | 300 |
| 13. | Սնուցման հանգույցի փոխարինում | հատ | 2700 |
| 14. | Հետադարձ ինֆորմացիայի և գիշերային նմանակման հանգույցի փոխարինում | հատ | 2500 |
| 15. | Խոցման շղթայի հանգույցի փոխարինում | հատ | 2500 |
| 16. | Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումբլեր) փոխարինում | հատ | 2800 |
| 17. | Խոցման շղթայի անջատիչի (տումբլեր) փոխարինում | հատ | 2000 |
| 18. | Իրանի մեխանիկական վնասվածքի վերանորոգում | հատ | 2000 |
| 19. | Էլեկտրաեռակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով | սմ | 500 |
| 20. | Էլեկտրաեռակցման աշխատանքներ խողովակների համար1սմ կարի հաշվարկով | սմ | 700 |
| 21. | Իրանի ներկում | հատ | 3 000 |
| 22. | Ամբարձիչի կափարիչի փոխարինում | հատ | 5000 |
| 23. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թնիկի փոխարինում | հատ | 3000 |
| 24. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի | հատ | 1000 |

| | | | |
|---|---|---|---|
| | փոխարինում | | |
| 25. | Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում | հատ | 1500 |
| 26. | Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում | հատ | 500 |
| 27. | Շուտավիկաշարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում | հատ | 5000 |
| 28. | Շուտավիկաշարժաթևային մեխանիզմի կիսալուսնի փոխարինում | հատ | 3000 |
| 29. | Շուտավիկաշարժաթևային մեխանիզմի ականցի փոխարինում | հատ | 1500 |
| 30. | Էլեկտրական բլոկի փոխարինում | հատ | 18000 |
| 31. | Ղեկավարման բլոկի փոխարինում | հատ | 20000 |
| 32. | Դ816 դիոդի փոխարինում | հատ | 1 800 |
| 33. | ՌԷՍ-22 ռելեի փոխարինում | հատ | 3000 |
| 34. | Ռելե 24վ փոխարինում | հատ | 2800 |
| 35. | ԿԴ209 դիոդի փոխարինում | հատ | 2 000 |
| 36. | 1000մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1300 |
| 37. | 470մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 500 |
| 38. | 220մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1 000 |
| 39. | 47մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1 000 |
| 40. | 0,22մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 800 |
| 41. | 2,2մկֆ կոնդենսատորի փոխարինում | հատ | 1 000 |
| 42. | ԿՌԻ202Ն տիրիստորի փոխարինում | հատ | 2500 |
| 43. | 1N 4007 դիոդի փոխարինում | հատ | 1000 |
| 44. | VT 151 տիրիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 45. | Մեկ հաղորդալարի փոխարինում | հատ | 500 |
| 46. | Տպագիր պլատայի ուղղում | հատ | 500 |
| 47. | Միկրոանջատիչի փոխարինում | հատ | 3000 |
| 48. | Միկրոանջատիչի կալունակի փոխարինում | հատ | 500 |
| 49. | Կցորդիչի (խաչուկ) փոխարինում | հատ | 5000 |
| 50. | BT 138 սիմիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 51. | TC 106 սիմիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 52. | ՓԻՔ 16Յ622 պրոցեսորի փոխարինում | հատ | 4000 |
| 53. | 7805 ստաբիլիզատորի փոխարինում | հատ | 2000 |
| 54. | Ամբարձիչի թևիկի փոխարինում | հատ | 1500 |
| 55. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի երկար զսպանակի փոխարինում | հատ | 4000 |
| 56. | Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի կարճ զսպանակի փոխարինում | հատ | 1500 |
| 57. | РП-14-30 հանգույցի փոխարինում | հատ | 2000 |
| | **Ընդամենը՝ 219900** | | |

2.Զորային նորոգման ծառայություններ (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Մեկնարկիչի ( ТУМБЛЕР ПУСК) փոխարինում | հատ | 2000 |
| 2. | Սեղմակի փոխարինում | հատ | 2000 |
| 3. | Ալեհավաքի փոխարինում | հատ | 4000 |
| 4. | Ալեհավաքի բնիկի փոխարինում | հատ | 1000 |
| 5. | Սնուցման հանգույցի փոխարինում | հատ | 1800 |
| 6. | Մեկ մարտկոցի փոխարինում | հատ | 4000 |
| 7. | Մեկ ռադիոմալոփսի փոխարինում | հատ | 600 |
| 8. | Ռադիոմալոփսի մեկ միացման հանգույցի փոխարինում | հատ | 1000 |
| 9. | Խմբային փոխանցիչի փոխարինում | հատ | 1500 |
| 10. | Ռելե 12 վոլտ փոխարինում | հատ | 2000 |
| 11. | Մեկ հաղորդալարի փոխարինում | հատ | 500 |
| 12. | Կոնդենսատորի փոխարինում | հատ | 700 |
| 13. | Ինդուկցիոն կոնտուրի փոխարինում | հատ | 2000 |
| 14. | Ռեզիստորի փոխարինում | հատ | 700 |
| 15. | Փոփոխական ռեզիստորի փոխարինում | հատ | 1000 |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | ԿՏ 368 տրանզիստորի փոխարինում | | |
| 17. | ԿՏ 315 տրանզիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 18. | Ինդուկտիվ կոճի փոխարինում | հատ | 1500 |
| 19. | Վարիկապի փոխարինում | հատ | 800 |
| 20. | ԿՏ 646տրանզիստորի փոխարինում | հատ | 1000 |
| 21. | ԿՏ 920Ա տրանզիստորի փոխարինում | հատ | 2000 |
| 22. | ԿՏ 920Բ տրանզիստորի փոխարինում | հատ | 6000 |
| 23. | ԿՏ 972Ա տրանզիստորի փոխարինում | հատ | 6000 |
| 24. | ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի փոխարինում | հատ | 2500 |
| 25. | 4 ՄՀց ռեզոնատորի փոխարինում | հատ | 3000 |
| 26. | ԿՑ 162 Ա ստաբիլիտրոնի փոխարինում | հատ | 1500 |
| 27. | 7805 ստաբիլիզատորի փոխարինում | հատ | 1000 |
| 28. | 1015ՊԼ4 սինտեզատորի փոխարինում | հատ | 2000 |
| 29. | Լուսադիոդի փոխարինում | հատ | 1500 |
| 30. | Տպագիր պլատայի ուղղում | հատ | 200 |
| 31. | Ռադիոիրահանգների ձևավորման բլոկի փոխարինում | հատ | 500 |
| 32. | Ռադիոհաղորդիչ բլոկի փոխարինում | հատ | 10000 |
| 33. | Իրանի ներկում | հատ | 7600 |
| | | հատ | 1000 |
| **Ընդամենը՝ 74900** | | | |

3. Ջորային նորոգման ծառայություններ (Լիցքավորման սարքի նորոգում)

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Սնուցման բլոկի փոխարինում | հատ | 5000 |
| 2. | Կառավարման բլոկի փոխարինում | հատ | 7000 |
| 3. | Սնուցման հանգույցի փոխարինում | հատ | 2000 |
| 4. | Ապահովիչի բնիկի փոխարինում | հատ | 1500 |
| 5. | Ապահովիչի փոխարինում | հատ | 500 |
| 6. | Տումբլերի փոխարինում | հատ | 2000 |
| 7. | Լուսադիոդի փոխարինում | հատ | 500 |
| 8. | Տպագիր պլատայի ուղղում | հատ | 500 |
| 9. | Իրանի փոխարինում | հատ | 5900 |
| **Ընդամենը՝ 24900** | | | |

4. Ջորային նորոգման ծառայություններ (Տրանսֆորմատորի նորոգում)

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | ՏՍՉ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 51900 |
| 2. | ՏՍՉ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 50000 |
| 3. | ՏՍՉ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 28000 |
| 4. | ՏՍՉ 380/220,4 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 26000 |
| 5. | ՏՍՉ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 12000 |
| 6. | ՏՍՉ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 18000 |
| 7. | Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 28000 |
| 8. | Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 23000 |
| 9. | Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում | հատ | 18000 |
| 10. | Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում | հատ | 13000 |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | ՏՍՁ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 117000 |
| 12. | ՏՍՁ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 58000 |
| 13. | ՏՍՁ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 40000 |
| 14. | Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 40000 |
| 15. | Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում | հատ | 36000 |
| | **Ընդամենը՝ 558900** | | |

5. Ջորային նորոգման ծառայություններ (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68)

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Բաշխման տուփի փոխարինում | հատ | 1900 |
| 2. | Բաշխման տուփի կափարիչի փոխարինում | հատ | 1000 |
| 3. | Բաշխման տուփի մեկուսիչի փոխարինում | հատ | 1000 |
| | **Ընդամենը՝ 3900** | | |

6. Ջորային նորոգման ծառայություններ (Բաժանարար տուփի նորոգում) (ԿԾԿ)

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Բաժանարար տուփի փոխարինում | հատ | 1800 |
| | **Ընդամենը՝ 1800** | | |

7. Ջորային նորոգման ծառայություններ (Էլեկտրական հանգույցի նորոգում)

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Միավորի գին/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Սնուցման հանգույցների փոխարինում | հատ | 2700 |
| 2. | Հեռադարձ ինֆորմացիայի և գիշերային նմանակման հանգույցների փոխարինում | հատ | 2500 |
| | **Ընդամենը՝ 5200** | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

*Հավելված N 2*
*N ԳՀԾՁԲ-2/1-1 պայմանագրին կից*
*N 1 Համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

դրամ

| Հ/հ | Գնման առարկա | CPV կոդ | Վճարումը կիրականացվի 2018թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ |
| 1 | Ջրային նորոգման ծառայություններ (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Տ-127-ի նորոգում) | 50841200/324/10/1 | 1000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 4000000 | 4000000 | 4000000 |
| 2 | Ջրային նորոգման ծառայություններ (Ղեկավարման վահանակ ՈՒՀԿ նորոգում) | 50841200/326/10/1 | 375000 | 750000 | 750000 | 750000 | 1125000 | 1125000 | 1125000 | 1500000 | 1500000 | 1500000 |
| 3 | Ջրային նորոգման ծառայություններ (Լիցքավորման սարքի նորոգում) | 50841200/329/10/1 | 125000 | 250000 | 250000 | 250000 | 375000 | 375000 | 375000 | 500000 | 500000 | 500000 |
| 4 | Ջրային նորոգման ծառայություններ (Տրանսֆորմատորի նորոգում) | 50841200/330/10/1 | 125000 | 250000 | 250000 | 250000 | 375000 | 375000 | 375000 | 500000 | 500000 | 500000 |
| 5 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաշխման տուփի նորոգում) (ԾՄ-68) | 50841200/331/10/1 | 50000 | 100000 | 100000 | 100000 | 150000 | 150000 | 150000 | 200000 | 200000 | 200000 |
| 6 | Ջրային նորոգման ծառայություններ (Բաժանարար տուփի նորոգում) (ԿԾԿ) | 50841200/332/10/1 | 50000 | 100000 | 100000 | 100000 | 150000 | 150000 | 150000 | 200000 | 200000 | 200000 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Ջրային նորոգման ծառայություններ (էլեկտրական հանգույցի նորոգում) | 50841200/333/10/1 | 100000 | 150000 | 150000 | 150000 | 200000 | 200000 | 200000 | 400000 | 400000 | 400000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» "ARTASHES BAGHDASARYAN" 32530056